

ՀԹՕԱՕ Ի ՕԾԻ ՀԱԾ

2003 Մի շրջանում ՀԱՅԿԻ ՀԵՂԻ ՇՃԻ ՀԱԾՍՈՍԻ ԿԱԾՈՒՆԵՐԻ ՍԾԻ  
ՊԱԾԻ ՆՍԻՆՈՒՆՈՒՄ

Վերջին շրջանում

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև  
տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական  
հանձնաժողով

Տնտեսական համագործակցության հայ-ամերիկյան միջկառավարական  
հանձնաժողով

Ֆինանսական և տեխնիկական համագործակցության հայ-գերմանական  
միջկառավարական հանձնաժողով

Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության  
միջկառավարական հանձնաժողով

Առևտրի, տնտեսության, տեխնոլոգիայի, գիտության, կրթության և մշակույթի  
բնագավառներում համագործակցության հայ-ինդիական միջկառավարական  
հանձնաժողով

Առևտրի, արդյունաբերության, էներգետիկայի, գիտության, տեխնոլոգիաների,  
գյուղատնտեսության, կրթության և մշակույթի բնագավառներում հայ-չինական  
միջկառավարական հանձնաժողով

Տնտեսական համագործակցության հարցերով հայ-բելառուսական  
միջկառավարական հանձնաժողով

Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության միջև  
տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողով

Հայ-հունական տնտեսական, արդյունաբերական և գիտատեխնիկական  
համագործակցության միջկառավարական հանձնաժողով

Հայ-սիրիական միջկառավարական հանձնաժողով

Հայաստանի Հանրապետության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության  
միջկառավարական հանձնաժողով

Հայ-ռումինական միջկառավարական հանձնաժողով

Հայ-բուլղարական միջկառավարական հանձնաժողով

*Հայ-ճապոնական տնտեսական համագործակցության կոմիտեներ*

*ՀՀ ՏՐԱՍԵԿԱ միջկառավարական հանձնաժողով*

*Հաշվետու ժամանակահատվածում համագործակցության աշխուժացումը չեն գրանցել եւ նիստ չեն գումարել հետեւյալ միջկառավարական հանձնաժողովները.*

*ՀՀ եւ Տաջիկստանի Հանրապետության միջեւ տնտեսական համագործակցության հանձնաժողով.*

---

**Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ տնտեսական եւ գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողով**

Որպես կանոն, միջկառավարական հանձնաժողովների շարքում ակտիվ գործունեությամբ եւ համագործակցության ոլորտների բազմազանությամբ աչքի է ընկնում Հայ-ռուսական միջկառավարական հանձնաժողովը: Այսպես, 2003թ-ի I կիսամյակի տվյալներով անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ապրանքաշրջանառությունն աճել է 80,7%-ով, ինչը լուրջ ցուցանիշ է դիտվում ցամաքային կապի բացակայության պայմաններում:

ՀՀ եւ ՌԴ միջեւ միջկառավարական հանձնաժողովի հայկական մասի անհատական կազմը հաստատվել է ՀՀ վարչապետի 2000թ. հունիսի 20-ի թիվ 373 որոշմամբ, այնուհետեւ ՀՀ վարչապետի 2001թ. մարտի 6-ի թիվ 178 և 2003թ. մայիսի 30-ի թիվ 249-Ա որոշումներով կատարվել են փոփոխություններ (հանձնաժողովի հայկական մասի նախագահ՝ ՀՀ պաշտպանության նախարար Ս.Սարգսյան):

Հաշվետու ժամանակաշրջանում կայացել է Հայ-ռուսական միջկառավարական հանձնաժողովի հերթական՝ հինգերորդ համատեղ նիստը, ինչպես նաեւ ի կատար ածվել նիստի արդյունքում ընդունված Արձանագրության կետերի շոշափելի մասը: Նիստը կայացել է ս.թ. փետրվարի 5-ին Երեւանում, որի ընթացքում հաստատվել են ՀՀ եւ ՌԴ միջեւ մինչև 2010 թվականն ընկած ժամանակահատվածում երկարաժամկետ տնտեսական համագործակցության ծրագրերը:

Մայիսի 14-ին ՌԴ Պետդոմայի, իսկ մայիսի 28-ին Դաշնային Խորհրդի վավերացմամբ իր հանգուցալուծումը ստացավ «Գույք պարտքի դիմաց» ծրագիրը, որի արդյունքում Հայաստանի գույքը հանդիսացող 5 ձեռնարկություններ փոխանցվեցին Ռուսաստանի կառավարմանը:

Էներգետիկայի բնագավառում՝ կազմված է 2003-2004թթ. հայկական ԱԷԿ-ի երկրորդ բլոկի անվտանգության բարձրացմանն ուղղված գործողությունների

նախագիծը, որը ենթակա էր ԱԷՄԳ-ի փորձագետների ներկայացմանը ս.թ. նոյեմբերին Երեւան կատարելիք այցի ընթացքում:

Հայ-ռուսական համագործակցության շրջանակներում բանակցություններ են տարվում բնական գազի տեղափոխման սակագինը չբարձրացնելու, ինչպես նաև հարկերի վերացման հնարավորության ուղղությամբ:

Նիստի ընթացքում հայկական կողմը հանդես է եկել վերջին ժամանակաշրջանում հաճախակի քննարկվող «Հյուսիս-հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի վերաբերյալ համաձայնագրին միանալու ՀՀ հայտի քննարկման արագացման խնդրանքով:

Ռուսական կողմի քննարկմանն է ներկայացվել նաև Երեւանի լազերային տեխնիկայի ինստիտուտի հիման վրա համատեղ ձեռնարկություն ստեղծելու առաջարկը:

Մշակույթի ոլորտում պայմանավորվածություն է ձեռք բերվել 2004թ-ին անցկացնել «Հայաստանի օրեր» Ռուսաստանում և 2005թ-ին՝ փոխադարձաբար «Ռուսաստանի օրեր»՝ Հայաստանում:

Մշակման փուլում են գտնվում մի շարք միջկառավարական պայմանագրերի եւ համաձայնագրերի նախագծեր՝ կապված շրջակա միջավայրի պահպանության, կրթության, գազի արդյունաբերության ոլորտում համագործակցության, զինծառայողների, քաղաքացիների, ռազմական ծառայությունից հեռացված անձանց եւ նրանց ընտանիքների անդամների իրավունքների եւ սոցիալական երաշխիքների փոխադարձ ընդունման, եկամտի եւ ունեցվածքի կրկնակի հարկումից խուսափելու եւ այլ փոխշահավետ հետաքրքրություն ներկայացնող բնագավառների հետ:

Թեև հայ-ռուսական առեւտրատնտեսական հարաբերությունները չեն համապատասխանում երկու երկրների քաղաքական հարաբերությունների ներկա մակարդակին, այնուամենայնիվ, հանձնաժողովի գործունեության զարգացման եւ աճի տեմպերը թույլ են տալիս ենթադրել, որ մոտ ապագայում ներդրված ջանքերը կտան անհրաժեշտ արդյունք:

### Տնտեսական համագործակցության հայ-ամերիկյան միջկառավարական հանձնաժողով

Ինչպես նախորդ տարիներին, 2003թ-ին նույնպես ակտիվ են բեղմնավոր աշխատանք է ծավալել Հայ-ամերիկյան միջկառավարական հանձնաժողովը՝ գումարելով երկու համատեղ նիստեր:

Հանձնաժողովը ստեղծվել է 1999թ. սեպտեմբերին եւ մինչ օրս գումարել 7 նիստ. առաջինը՝ 2000թ. մայիսի 8-9-ը՝ Երեւանում, երկրորդը՝ նույն թվականի

սեպտեմբերի 12-13-ը՝ Վաշինգտոնում, երրորդը՝ 2001թ. մարտի 5-6-ը՝ Երեւանում, չորրորդը՝ 2002թ. հունվարի 23-24-ը՝ Երեւանում, հինգերորդը՝ նույն տարվա սեպտեմբերի 26-27-ը՝ Վաշինգտոնում:

Ա.թ. մայիսի 12-13-ը Երեւանում անցկացվեց Տնտեսական համագործակցության հայ-ամերիկյան միջկառավարական հանձնաժողովի հերթական վեցերորդ նիստը:

Նիստի ընթացքում քննարկման արժանացան Հայաստանին տրամադրվելիք ԱՄՆ օժանդակության եւ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ռազմավարության հարցերը: Հատկանշական է, որ օժանդակության ծավալները անցյալ տարվա համեմատությամբ նվազել են 10%-ով եւ կկազմեն մոտ 75 մլն. ԱՄՆ դոլար, ինչը կապված է Հայաստանում հաջողությամբ ընթացող տնտեսական զարգացումների հետ: Նիստի ընթացքում որոշվել է նաեւ ապրանքային վարկի արդյունքում կուտակված 45մլն. ԱՄՆ դոլար կազմող պարտքի վերածեւակերպման հարցը, որի մարումը կսկսվի հաջորդ տարվանից:

Խոսելով աղքատության հաղթահարման նպատակով 2003թ. նախատեսված 5 մլրդ. դոլարի տրամադրման սկզբունքների մասին՝ ամերիկյան աշխատանքային խմբի ղեկավար Թ.Ադամսը նշել է, որ այն կբաշխվի մրցակցության կարգով այն երկրներին, որտեղ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն կազմում է մինչեւ 1400 ԱՄՆ դոլար:

Նիստի ընթացքում քննարկվել են նաեւ մակրոտնտեսական քաղաքականության խնդիրների, կոռուպցիայի դեմ պայքարի, մարդկանց անօրինական փոխադրումների, փողերի լվացման ու ֆինանսական հանցավորության, ներդրումների, առեւտրի զարգացմանը վերաբերող հարցեր:

Նիստի աշխատանքների ավարտին Հայաստանում ԱՄՆ դեսպան Ջ.Օրդուեյը եւ Գառնիի տիեզերական հետազոտությունների կենտրոնի տնօրեն Վ.Գյուրզադյանը ստորագրել են համաձայնագիր, համաձայն որի ամերիկյան կողմը կենտրոնին կտրամադրի 275 հազար դոլարի դրամաշնորհ:

Հանձնաժողովի վեցերորդ նիստի արդյունքում մշակված գործողությունների ծրագիրը ստորագրվել է ս.թ. սեպտեմբերի 5-ին ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Դ.Ավետիսյանի եւ Հայաստանում ԱՄՆ գործերի ժամանակավոր հավատարմատար Վ.Ուոլքերի միջեւ կայացած հանդիպման ընթացքում:

Ա.թ. նոյեմբերի 4-5-ը Վաշինգտոնում կայացել է նաեւ հանձնաժողովի յոթերորդ նիստը, որը հայկական կողմից նախագահում էր ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Վ.Խաչատրյանը, իսկ ամերիկյան կողմից՝ ԱՄՆ օժանդակության գրասենյակի համակարգող, դեսպան Կ.Պասկուալը:

Քննարկումների ընթացքում ուշադրության են արժանացել «Աղքատության նվազեցման ռազմավարական ծրագիրը» (որն արդեն ներկայացվել է Հայաստանում հավատարմագրված օտարերկյա դիվանագիտական ու

միջազգային կազմակերպությունների առաքելություններին), կառավարության հակակոռուպցիոն քաղաքականությունը, ՓՄՁ-ների բնագավառի զարգացման խնդիրները, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամում Հայաստանի ընդգրկման հնարավորությունը, ֆինանսական ու բանկային համակարգերին վերաբերող հարցերը, մասնավորապես լայն զանգվածների համար բանկային կրեդիտի անհասանելիությունը (խնդրի լուծման նպատակով ծրագիր է մշակվում USAID-ի եւ Eurasia Fund-ի կողմից), Հայաստանի պարտքի մարման հարցը: Քննարկվել են նաեւ էներգետիկայի զարգացման հեռանկարները, ի նպաստ որի ԱՄՆ էներգետիկայի դեպարտամենտը պատրաստակամություն է հայտնել երեւանում անցկացնել էներգետիկ անվտանգության համաժողով (պայմանավորվածության համաձայն այն տեղի կունենա 2004թ. հունիս ամսին): Համաձայնություն է ձեռք բերվել ԱՄՆ-ի հետ բնականոն հարաբերությունների զարգացման, ինչպես նաեւ Հայաստանին ամերիկյան բարձր տեխնոլոգիաների տրամադրման համար խոչընդոտ հանդիսանցող Ջեկսոն-Վենիկի ուղղված վերացնելու վերաբերյալ ԱՄՆ վարչակազմի կողմից գրավոր կարծիք ներկայացնել ԱՄՆ Կոնգրեսին:

Ի լրումն համատեղ նիստի արդյունքների, ս.թ. նոյեմբերի 20-ին ԱՄՆ Ներկայացուցիչների պալատն ընդունել է ԱՄՆ եւ Հայաստանի միջեւ առևտրի զարգացման մասին օրինագիծ, ըստ որի Հայաստանին շնորհվում է Մշտական կանոնավոր առևտրային հարաբերությունների կարգավիճակ, որը հնարավորություն կտա հայկական ապրանքները ԱՄՆ ներմուծել մաքսային ցածր սակագներով:

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

### Ֆինանսական եւ տեխնիկական համագործակցության հայ-գերմանական միջկառավարական հանձնաժողով

Վերջին ժամանակաշրջանում ակտիվ աշխատանք է ծավալել Հայ-գերմանական միջկառավարական հանձնաժողովը: Հատկանշական է, որ ըստ Գերմանիայի վիճակագրության դաշնային ծառայության տվյալների, երկու երկրների ապրանքաշրջանառության ցուցանիշը առաջին կիսամյակի ընթացքում նախորդ տարվա համեմատ աճել է մոտ 120%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում հայ-գերմանական համագործակցությունը սկսվել է փետրվարի 14-ին »Հիվանդանոցների տեխնիկական վերազինում« ծրագրի ֆինանսավորման պայմանագրով, որը նախատեսում է 2.6մլն. եվրոյի չափով դրամաշնորհ: Ապրիլի 1-3-ը կայացել է նաեւ տնտեսական եւ տեխնիկական համագործակցության հայ-գերմանական միջկառավարական հանձնաժողովի նիստը, որի արդյունքներն ամրագրվել են Արձանագրության մեջ:

Նիստի ընթացքում ձեռք են բերվել 2003-2004 թթ. համար ֆինանսական համագործակցության նոր պայմանավորվածություններ, համաձայն որոնց գերմանական կողմը համաձայնել է Հայաստանին հատկացնել 15 մլն. եվրո գումարի վարկ և 2.5 մլն. եվրո գումարի դրամաշնորհ, որոնք կտրամադրվեն մասնավոր ձեռնարկատիրության խրախուսմանը, ավանդների երաշխավորման համակարգի ստեղծմանը, համայնքային ենթակառուցվածքների վերականգնմանը, ինչպես նաև «Ուսումնասիրությունների և փորձագետների հիմնադրամ III»-ի ստեղծմանը: Տեխնիկական համագործակցության շրջանակներում պայմանավորվածություն է ձեռք բերվել 5 մլն. եվրո գումարի դրամաշնորհի հատկացման հարցում, որից 0.8 մլն. եվրոն կտրամադրվի «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» շրջանակներում խորհրդատվության իրականացման նպատակով:

2001թ-ից Հայ-գերմանական միջկառավարական հանձնաժողովը ձեռնամուխ է եղել նաև «Կովկասյան նախաձեռնություն» ծրագրի շրջանակներում նախագծերի իրականացմանը, որոնք նախատեսում են Հարավային Կովկասի երեք երկրներում իրականացնել տարածաշրջանային մի շարք ծրագրեր ֆինանսական եւ տեխնիկական համագործակցության շրջանակներում: Հատկանշական է «Վարկերի երաշխիքների հիմնադրամ» ծրագիրը, որի համար նախատեսված 7.6 մլն. եվրոն տրամադրվեց Հայաստանին եւ Վրաստանին այն բանից հետո, երբ Ադրբեյջանը հրաժարվեց Հայաստանի հետ համագործակցությունից, եւ հետագայում Հայաստանի մասնաբաժինը խորհրդատվության նպատակով ավելացվելով եւս 0.5 մլն. եվրոյով կազմեց 4.3 մլն. եվրո: Ծրագրի նպատակն է երաշխիքներ տրամադրել Հայաստանի առեւտրային բանկերին՝ վարկային հնարավորություններ ընձեռելով փոքր եւ միջին ձեռնարկություններին: Բացի այդ, 2.25 մլն. եվրո գումար է հատկացվում տուբերկուլյոզի դեմ պայքարի ծրագրին եւ մոտ 11 մլն. եվրո գումար՝ 8 տարբեր բնագավառներում տեխնիկական համագործակցության շրջանակներում: «Կովկասյան նախաձեռնություն» ծրագիրը ներառում է նաև անդրկովկասյան երկրների սահմանային հատվածներում գտնվող բնության եւ կենսաբազմազանության պահպանումը, որի ֆինանսավորման չափը դեռեւս գտնվում է ճշգրտման փուլում:

Ծրագրերի զգալի մասի ֆինանսավորումը եւ վարկավորումը իրականացնելու է գերմանական KfW բանկը, որի պատվիրակության հետ ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունում արդեն կնքվել են «Վարկային երաշխիքների հիմնադրամ» և «Ուսումնասիրությունների եւ փորձագետների հիմնադրամ III» ծրագրերի ֆինանսավորման պայմանագրերը, «Տուբերկուլյոզի միջտարածաշրջանային ծրագրի» վերաբերյալ համաձայնագիրը եւ «Տարածաշրջանային էլեկտրաէներգիայի փոխանակում - Ալավերդի 2» ծրագրի 4.7 մլն. եվրո գումարով ֆինանսավորման եւ վարկի տրամադրման պայմանագիրը: Նախապատրաստական փուլում են գտնվում մի շարք պայմանագրեր եւ համաձայնագրեր, որոնք լուրջ խթան կհանդիսանան հայ-գերմանական համագործակցության, ինչպես նաև Հայաստանի տնտեսության զարգացման համար:

## Հայաստանի Հանրապետության եւ Իրանի Իսլամական Հանրապետության միջկառավարական հանձնաժողով

Դատելով միջկառավարական հանձնաժողովի գործունեության արդյունքներից՝ կարելի է նշել, որ Հայաստանի եւ Իրանի առեւտրատնտեսական հարաբերությունները դրվել են ամուր հիմքերի վրա: Դրա մասին է վկայում 2003թ-ի ընթացքում երկու հարեւան երկրների ապրանքաշրջանառության աճը՝ կազմելով մինչև 150 մլն.դոլար:

Անց է կացվել Հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի 4 նիստ՝ 1995թ.՝ Երեւանում, 1998թ.՝ Թեհրանում, 2001թ. հունվարի 24-ին՝ կրկին Երեւանում: Հայ-իրանական հանձնաժողովի վերջին չորրորդ համատեղ նիստն անցկացվել է 2002թ. դեկտեմբերի 9-12-ը՝ Թեհրանում, որի արդյունքում ստորագրված Արձանագրության կետերի կատարման շրջանակներում ս.թ-ին իրականացվել են հետևյալ գործողությունները:

Էներգետիկայի ոլորտում բանակցությունների փուլում են Ագարակ-Շինուհայր օդային էլեկտրահաղորդման գծի շինարարության իրականացումը եւ Երեւանի գազի համակարգի վերականգնումը, որոնց վերաբերյալ պայմանագրեր են ստորագրվել «Սանարմ» և «Սանիր» ընկերությունների հետ:

Իրանական կողմի հետ բանակցություններ են ընթացել «Էլեկտրաէներգիա գազի դիմաց» ծրագրի մանրամասները ճշտելու նպատակով, որի շուրջ վերջնական պայմանավորվածությունը ձեռք կբերվի իրանական պատվիրակության Հայաստան կատարելիք այցի ընթացքում:

Ամփոփվել է Արաքս գետի վրա հայկական տարածքում (Մեղրու մոտ) ՀԷԿ-ի շինարարության տեխնիկատնտեսական հիմնավորման արդյունքը: Կայանը կկառուցվի իրանական միջոցներով, որի դիմաց Հայաստանը հետագայում կփոխհատուցի արտադրած էլեկտրաէներգիայով: Քննարկվում է նաեւ Իրանի տարածքում, Արաքսի վրա ՀԷԿ-ի համատեղ կառուցման հարցը:

Տրանսպորտի եւ կապի ոլորտում նկատվում է որոշակի աշխուժացում, որից կարելի է առանձնացնել համագործակցությունը Քաջարանի թունելի շինարարության գործում:

Ս.թ. հոկտեմբերի 20-24-ը Հայաստանում գտնվող ԻԻՀ Արեւելյան Ատրպատականի նահանգապետ Մ.Ա.Սոփանոլլահին արտահայտվել է ՀՀ Սյունիքի մարզի հետ սերտ համագործակցություն հաստատելու օգտին եւ ներկայացրել ՀՀ վերոնշյալ մարզում հանքարդյունաբերության, կոշիկի արտադրության, տեքստիլ բնագավառներում համագործակցության մի շարք ծրագրեր:

Մշակույթի բնագավառում՝ կազմակերպվել են Կ.Դեմիրճյան կենտրոնում Իրան-Հայաստան շինանյութերի եւ տեխնոլոգիաների, Նկարչի տանը՝ ԻԻՀ

«Գալուստյան» ընկերության կահույքի ցուցահանդեսներ: Միաժամանակ թեհրանում անցկացվել է հայկական ֆիլմերի շաբաթ:

Ս.թ. մայիսի 5-ին 2003-2006թթ. համագործակցության ծրագիր է ստորագրվել երկու երկրների Գիտության և կրթության նախարարների միջև:

Հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամկետները գտնվում են ճշգրտման փուլում:

Առելտրի, տնտեսության, տեխնոլոգիայի, գիտության, կրթության եւ մշակույթի բնագավառներում համագործակցության հայ-հնդկական միջկառավարական հանձնաժողով

Հանձնաժողովն իր գործունեությունը ծավալել է 1997թ-ից՝ մինչ այժմ գումարելով 3 համատեղ նիստ: Առաջին նիստը կայացել է 1997թ. սեպտեմբերի 17-ին՝ Չնդկաստանում, իսկ երկրորդը՝ 2001թ. հուլիսի 25-27-ը՝ Երեւանում:

Ս.թ. մայիսի 23-ին Նյու Դելիում տեղի է ունեցել Հայ-հնդկական հանձնաժողովի երրորդ համատեղ նիստը, որի ընթացքում ամփոփվել են նախորդ նիստի Արձանագրության կատարման արդյունքները եւ քննարկվել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ հարցեր, ձեռք են բերվել կոնկրետ պայմանավորվածություններ: Հանձնաժողովի գործունեության հիմնական ծավալը բաժին է ընկնում գյուղատնտեսության բնագավառում համագործակցությանը: Կողմերը համաձայնության են եկել ստեղծել մի շարք համատեղ ձեռնարկություններ: Համագործակցության մակարդակը խորացնելու եւ փորձի փոխանակման գործընթացը խթանելու նպատակով քննարկման են արժանացել ֆինանսաբանկային, տեղեկատվական տեխնոլոգիաների, զբոսաշրջության, առողջապահության, սեյսմոլոգիայի, կրթության եւ մշակույթի բնագավառների վերաբերյալ հարցեր:

Նիստի ընթացքում ստորագրվել են նաեւ կարելուր հետեւյալ փաստաթղթերը.

- «Պաշտպանության բնագավառում համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիր,
- «2003-2006թթ. համար մշակութային փոխանակումների» ծրագիր,
- «Հայաստանի եւ Չնդկաստանի կառավարությունների միջեւ ներդրումների փոխադարձ խրախուսման եւ պաշտպանության մասին» համաձայնագիր,
- Չնդկաստանի առելտրաարդյունաբերական պալատների ֆեդերացիայի եւ Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության միջեւ փոխըմբռնման հուշագիր:

Ս.թ. սեպտեմբերին Երեւանում կայացած «Expo-Armenia 2003»-ին մասնակցել են մի շարք հնդիկ գործարարներ, որի արդյունքում ձեռք են բերվել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող պայմանավորվածություններ:



Հայ-հնդկական միջկառավարական հանձնաժողովի Երեւանում կայանալիք չորրորդ նիստի ժամկետները դեռեւս ճշգրտված չեն:

Առեւտրի, արդյունաբերության, էներգետիկայի, գիտության, տեխնոլոգիաների, գյուղատնտեսության, կրթության եւ մշակույթի բնագավառներում հայ-չինական միջկառավարական հանձնաժողով

Բնականոն ընթացքով է զարգանում հայ-չինական համագործակցությունը միջկառավարական հանձնաժողովի շրջանակներում, ինչի արդյունքը երկու երկրների միջև ապրանքաշրջանառության աճն է, որն արդեն հատել է 8մլն. ԱՄՆ դոլարի սահմանագիծը:

Միջկառավարական այս հանձնաժողովը մինչ այժմ գումարել է 3 նիստ, որոնցից առաջինը՝ 1999թ. օգոստոսի 1-3-ը՝ Երևանում, երկրորդը՝ 2000թ. հոկտեմբերի 24-ին՝ Պեկինում:

Ա.թ. փետրվարի 25-ին Երեւանում կայացել է հանձնաժողովի երրորդ համատեղ նիստը, որտեղ գերակայում էին քննարկումները սինթետիկ կաուչուկի, էներգետիկայի, գյուղատնտեսական տեխնոլոգիաների եւ տնկանյութերի փոխանակման ոլորտներում:

Սինթետիկ կաուչուկի բնագավառում, 2003թ. ապրիլի 15-ին նախատեսվում էր ավարտել «Չինարմենպրեն» սինթետիկ կաուչուկների համատեղ ձեռնարկության գրանցումը եւ Չինաստանի Շանսի նահանգում նրա շինարարությունը, որը սակայն հետաձգվել է Չինաստանում ոչ տիպիկ թոքաբորբի տարածման պատճառով: Աշխատանքներ են տարվում նաեւ «ԼՆաիրիտ - 2» գիտահետազոտական ինստիտուտի հիման վրա համատեղ գիտահետազոտական կենտրոնի ստեղծման ուղղությամբ:

Առաջարկությունների եւ հետագա անելիքների ճշգրտման փուլում է գտնվում համագործակցությունը գյուղատնտեսական տեխնոլոգիաների եւ տնկանյութերի փոխանակման ոլորտներում: Մասնավորապես առաջարկվել է՝  
- Հայաստանում ստեղծել կաշվի վերամշակման համատեղ ձեռնարկություն,  
- Հայաստանում ստեղծել տեքստիլի, պատրաստի հագուստի, ինչպես նաեւ տեքստիլ հումքի՝ բամբակի եւ մետաքսի համատեղ արտադրություն,  
- Հայաստանից Չինաստան մատակարարել կոնյակ եւ գինիներ,  
- Չինաստանում հայկական ծիրանի եւ խաղողի փորձարկման այգիների հիման վրա հիմնել համատեղ արտադրություն:

Նիստին հաջորդել է ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Ա.Թումանյանի հանդիպումը չինական պատվիրակության անդամների հետ, որի ընթացքում պրն. Թումանյանը հույս է հայտնել, որ հաշվի առնելով Հայաստանի

տնտեսական զարգացումը եւ առկա ազատական օրենսդրությունը, չինական ընկերությունները ներդրումային լայն գործունեություն կիրականացնեն մեր երկրում եւ կհամագործակցեն տեղի գործարարների հետ:

### Տնտեսական համագործակցության հարցերով հայ-բելառուսական միջկառավարական հանձնաժողով

Կայուն զարգացման միտումներ է արձանագրում Հայ-բելառուսական միջկառավարական հանձնաժողովը:

Հանձնաժողովի առաջին նիստը կայացել է 2000թ. հունվարի 18-20-ը՝ Մինսկում, երկրորդը՝ 2000թ. հոկտեմբերի 30-31-ը՝ Երեւանում, երրորդը՝ 2001թ. ապրիլի 27-ին՝ Մինսկում:

Ա.թ. հոկտեմբերի 6-ից 7-ը կայացել է հանձնաժողովի հինգերորդ համատեղ նիստը, որի արդյունքում ստորագրվել է նիստի Արձանագրություն, ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ զբոսաշրջության, գյուղատնտեսության, կրթության եւ գիտության, մշակույթի, սպորտի բնագավառներում համագործակցության կոնկրետ ուղղությունների վերաբերյալ:

Հիշատակման է արժանի երկու երկրների միջեւ առկա ապրանքաշրջանառության ծավալների աճը, որը այս տարվա առաջին ութ ամիսների ընթացքում նախորդ տարվա համեմատ աճել է մոտ 61%-ով՝ կազմելով 2.5 մլն. դոլար: Բելառուսից Հայաստան են ներկրվում հիմնականում դեղորայք, մեքենաներ, մեքենաների պահեստամասեր: Հայաստանից արտահանվում են ալկոհոլային խմիչքներ, էլեկտրոնային սխեմաներ, չորացված մրգեր, դեղորայք:

Նախատեսվում է մեծացնել զգալի հաջողություններ գրանցած «ԲելԱռ» հայ-բելառուսական միջկառավարական ընկերության կանոնադիր կապիտալը, որը ներկայումս կազմում է 20 000 ԱՄՆ դոլար:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել մշակել երկու երկրների մշակույթի, գյուղատնտեսության նախարարությունների միջեւ համագործակցության ծրագրեր:

Գործարար շրջանակների միջեւ համագործակցության ընդարձակման նպատակով Ջարգացման հայկական գործակալությունը ծրագրերի փաթեթ է ներկայացրել բելառուսական կողմին: Հոկտեմբերի 13-ին Երեւանում կայացած հայ-բելառուսական գործարար հանդիպման արդյունքում ձեռք են բերվել կոնկրետ պայմանավորվածություններ:

Նախատեսվում է Հայ-բելառուսական հանձնաժողովի 6-րդ համատեղ նիստն անցկացնել 2004թ. սեպտեմբերին՝ Մինսկում:

Հայաստանի Հանրապետության եւ Վրաստանի Հանրապետության միջեւ  
տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողով

Միջկառավարական հանձնաժողովի առաջին համատեղ նիստը կայացել է դեռեւս 1998թ. նոյեմբերի 20-ին՝ Թբիլիսիում, երկրորդը՝ 2001թ. հունիսի 28-29-ը՝ Երեւանում:

Հաշվետու ժամանակաշրջանում հայ-վրացական համագործակցությանը նոր լիցք հաղորդեց հունիսի 27-28-ը ՀՀ նախագահ Ռ.Քոչարյանի երկօրյա պաշտոնական այցը Վրաստանի Հանրապետություն: Այցի շրջանակներում կայացած բանակցությունների ընթացքում քննարկվել է երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցերի լայն շրջանակ:

Տրանսպորտի եւ կապի ոլորտում համաձայնություն է ձեռք բերվել լաստանավերով ժամանող հայկական բեռների բեռնաթափման հնարավորություն ընձեռել ոչ միայն Բաթումիում, այլ նաեւ Փոթիի նավահանգիստում, ինչպես նաեւ Թուրքիայից Վրաստան մտնող հայկական բեռնատար մեքենաների համար Սադախլոյի մաքսակետի փոխարեն առավել կարճ եւ տնտեսապես շահավետ Բավրա մաքսակետի օգտագործման վերաբերյալ:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել մոտակա 1.5 տարվա ընթացքում ավարտել սահմանազատման եւ սահմանագծման գործընթացը: Բանակցությունների արդյունքում ՀՀ նախագահը որոշում է կայացրել շարունակել Թբիլիսիի հայկական թատրոնի վերանորոգման աշխատանքները: Քննարկվել է նաեւ Աբխազիայի տարածքով անցնող երկաթգծի վերաբացման հնարավորությունը, որը վրացական կողմը կապում է փախստականների վերադարձի խնդրի հետ: Այցի ընթացքում ստորագրվել են նաեւ «ՀՀ եւ Վրաստանի գործադիր իշխանությունների միջեւ տեղեկատվության բնագավառում համագործակցության մասին համաձայնագիրը» եւ «Մշակույթի, գիտության, կրթության եւ սպորտի բնագավառներում 2003-2005թթ. համագործակցության միջկառավարական ծրագիրը»:

Հայ-հունական տնտեսական, արդյունաբերական եւ գիտատեխնիկական  
համագործակցության միջկառավարական հանձնաժողով

2003թ-ի ընթացքում առանձնակի աշխուժացում չի նկատվել Հայ-հունական հանձնաժողովի աշխատանքում:

Հիշատակման է արժանի միայն ՀՀ առևտրի եւ տնտեսական զարգացման նախարարության կողմից մշակված «Աջակցություն Հայաստանում փոքր եւ միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացմանը» ծրագրի փոխանցումը հունական կողմին եւ 2003թ. մայիսին ՀՀ պատվիրակության այցը Աթենք՝ Հայաստանում Հունաստանի առևտրային բանկի խնդիրների, ապրանքային վարկի եւ «Արմենտել» ՓԲԸ հետ կապված հարցերի քննարկման նպատակով:

Հունական կողմը իր հերթին վերապատրաստման դասընթացներ է կազմակերպել Հայաստանում գյուղատնտեսության եւ զբոսաշրջության բնագավառի հայաստանյան մասնագետների համար:

### Հայ-սիրիական միջկառավարական հանձնաժողով

Հաշվետու ժամանակահատվածում Հայ-սիրիական միջկառավարական հանձնաժողովի գործունեությունը եւս աշխուժություն չի արձանագրել:

Ս.թ. օգոստոսի 27-ին Սիրիայի գյուղատնտեսության նախարար Նուր-ադ-դին Մունայի եւ նրա հայ գործընկերոջ միջեւ կայացած հանդիպման ընթացքում ստորագրվել է երկու երկրների Գյուղատնտեսության նախարարությունների միջեւ գիտատեխնիկական համագործակցության 2003-2005թթ. ծրագիրը, որը կոչված է նոր շունչ հաղորդել հայ-սիրիական հարաբերություններին: Այն հատկապես վերաբերվում է գիտության, բուսաբուծության, անասնաբուծության, անասնաբուժության, վերամշակող արդյունաբերության, ինչպես նաեւ բույսերի պաշտպանության բնագավառներին:

Ս.թ. սեպտեմբերին Երեւանում երկու երկրների կրթության եւ գիտության նախարարները ստորագրել են «2003-2006թթ. կրթության ոլորտում համագործակցության ծրագիր», որն իրականացվելու է բոլոր՝ նախադպրոցականից մինչեւ հետբուհական եւ գիտական աստիճաններում, ինչպես նաեւ արտահայտվելու է մշակույթի ոլորտի մասնագետների փոխանակման հարցում:

Նախնական պայմանավորվածության համաձայն հանձնաժողովի հաջորդ միստրը կանցկացվի 2004թ. մայիսին՝ Երեւանում:

### Հայաստանի Հանրապետության եւ Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջկառավարական հանձնաժողով

Հանձնաժողովի I, II, և III միստերը կայացել են համապատասխանաբար 1996թ.՝ Երեւանում, 1997թ.՝ Կահիրեում եւ 2002թ.՝ Երեւանում:

2003թ-ին կողմերը ձեռնամուխ են եղել 2002թ-ի հոկտեմբերին կայացած համատեղ նիստի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների իրագործմանը: Մասնավորապես, աշխատանքներ են տարվել ս.թ. մարտին Եգիպտոսում կայացած Կահիրեի ամենամյա միջազգային ցուցահանդեսին հայկական կազմակերպությունների մասնակցության կազմակերպման ուղղությամբ: Եգիպտական կողմին է փոխանցվել Երեւանյան "EXPO - 2003" ցուցահանդեսի մասնակցության հրավեր: Ներկայումս աշխատանքներ են ընթանում Երեւանում Եգիպտական առևտրի կենտրոնի վերագործարկման ուղղությամբ:

Այս ժամանակահատվածում նախապատրաստվել է նաեւ հայկական կողմի նախագահ Կ.Ճմարիտյանի գլխավորած պատվիրակության այցը Եգիպտոս՝ թեթեւ արդյունաբերության, ինչպես նաեւ տնտեսության այլ բնագավառներում համագործակցության հնարավորությունները քննարկելու նպատակով:

Եգիպտական կողմի քննարկմանն է ներկայացվել «ՀՀ հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի եւ ԵԱՀ հեռուստատեսության եւ ռադիոյի միության միջեւ հեռուստատեսության եւ ռադիոյի բնագավառում համագործակցության մասին» հայկական կողմից պատրաստված նախագիծը:

Նախատեսվում է հայ-եգիպտական միջկառավարական հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել 2004թ. չորրորդ եռամսյակի ընթացքում:

### Հայ-ռումինական միջկառավարական հանձնաժողով

Հանձնաժողովի անդրանիկ եւ վերջին նիստը կայացել է 2000թ. ապրիլին՝ Բուխարեստում:

Հաշվետու ժամանակահատվածում առաջընթաց գրեթե չի գրանցել հայ-ռումինական միջկառավարական հանձնաժողովը:

Հայ-ռումինական հարաբերությունների զարգացման համար զգալի խթան հանդիսացավ ՀՀ նախագահ Ռ.Քոչարյանի ս.թ. նոյեմբերի 18-19-ը Ռումինիա կատարած պաշտոնական այցը, որը նպատակ ուներ գլխավորապես հայ-ռումինական տնտեսական հարաբերությունները բարձրացնել քաղաքական համագործակցության մակարդակին: Այցի ընթացքում կնքվել են 3 համաձայնագրեր.

- Դիվանագիտական եւ ծառայողական անձնագիր ունեցողների համար մուտքի արտոնագրի պահանջի վերացման մասին համաձայնագիր,
- Արդյունաբերական սեփականության մասին համաձայնագիր
- Պաշտպանության ոլորտում համագործակցության մասին համաձայնագիր

Այցի ընթացքում կայացած բիզնես-ֆորումի շրջանակներում բացվել է հայկական-ռումինական ապրանքների ցուցահանդեսը, որտեղ ներկայացվել են

հայրենական արտադրության կոնյակը, գինին, բնական հյութերը եւ այլ ապրանքատեսակներ:

### Հայ-բուլղարական միջկառավարական հանձնաժողով

Հայ-բուլղարական միջկառավարական հանձնաժողովի առաջին նիստը կայացել է 1999թ. ապրիլի 14-15-ը՝ Սոֆիայում, իսկ երկրորդը՝ 2001թ. ապրիլի 10-11-ը՝ Երեւանում:

Չնայած 2003թ-ի ընթացքում հայ-բուլղարական միջկառավարական հանձնաժողովի նիստ չի գումարվել, այնուամենայնիվ, երկկողմ հարաբերություններն իրենց զարգացումն են գտել ՀՀ նախագահ Ռ.Քոչարյանի ս.թ. սեպտեմբերի 8-9-ը Բուլղարիա կատարած պաշտոնական այցի շնորհիվ:

Մասնավորապես, կնքվել են մի շարք փաստաթղթեր, այդ թվում՝  
- Հյուպատոսական կոնվենցիան,  
- Առողջապահության, Կրթության եւ գիտության բնագավառում համագործակցության մասին համաձայնագրերը,  
- 2003-2006թթ. մշակույթի բնագավառում համագործակցության մասին ծրագիրը:

Այցի ընթացքում կայացել է նաեւ երկու երկրների գործարարների միջեւ բիզնես-ֆորում, որին մասնակցել են 30 կազմակերպություններ ու 3 բանկեր Բուլղարիայից եւ 10 կազմակերպություն՝ Հայաստանից: Այն ավարտվել է Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության եւ Բուլղարիայի առևտրաարդյունաբերական պալատի միջեւ կնքված համաձայնագրերով, ինչպես նաեւ գյուղմթերքների եւ նավթամթերքների վերամշակման ու ներկրման ոլորտում պայմանավորվածությունների ձեռք բերմամբ: Առևտրաշրջանառությունը երկու երկրների միջեւ տարեկան հաշվարկով կազմում է մոտ 50 մլն. ԱՄՆ դոլար:

Հայ-բուլղարական միջկառավարական հանձնաժողովի հաջորդ նիստը նախատեսվում է անցկացնել 2004թ. փետրվարին՝ Սոֆիայում:

### Հայ-ճապոնական տնտեսական համագործակցության կոմիտեներ

Կոմիտեների անդրանիկ նիստը կայացել է 2001թ. հունիսին՝ Տոկիոյում:

Հայ-ճապոնական տնտեսական համագործակցության կոմիտեների երկրորդ համատեղ նիստի անցկացման ժամկետները քանիցս հետաձգվել են

համագործակցության առաջնային ոլորտները հստակեցնելու, երկուստեք հետաքրքրություն ներկայացնող նախագծերի քննարկմանը գործնական բնույթ հաղորդելու նպատակով:

Կոմիտեների առաջին նիստի արդյունքում հայ գործարարները ներդրումային առաջարկների փաթեթ են ներկայացրել ճապոնական կողմին, որի պատասխանը ակնկալվում է մոտ ժամանակաշրջանում:

Հայ-ճապոնական տնտեսական համագործակցության կոմիտեների երկրորդ համատեղ նիստը նախատեսված է անցկացնել 2004թ. սեպտեմբերին՝ Երեւանում:

### ՀՀ ՏՐԱՍԵԿԱ միջկառավարական հանձնաժողով

Հանձնաժողովի առաջին նիստը գումարվել է 2001թ. դեկտեմբերի 11-12-ը՝ Թբիլիսիում, երկրորդը՝ 2002թ. ապրիլի 24-25-ը՝ Տաշքենդում, իսկ երրորդը՝ ս.թ. հոկտեմբերի 8-10-ը՝ Երեւանում:

Ս.թ. հունվարի 23-24-ը Բաքվում եւ մայիսի 22-23-ը Տաշքենդում տեղի են ունեցել ՏՐԱՍԵԿԱ ազգային քարտուղարների եւ իրավական հարցերով փորձագետների աշխատանքային խմբի հանդիպումները, որոնց մասնակցել է հանձնաժողովի ազգային քարտուղար Գ.Գրիգորյանը: Հանդիպումների ընթացքում հաստատվել է հանձնաժողովի ընթացակարգի կանոնների եւ մշտական քարտուղարության կանոնակարգը, որոշում է կայացվել համատեղ ֆինանսավորել հանձնաժողովի ծախսերը, ստեղծել ՏՐԱՍԵԿԱ երկրների երկաթուղիների ղեկավարների խորհուրդ: Քննարկվել են նաեւ մի շարք նախագծային առաջարկներ:

Ս.թ. մայիսին ավարտին է հասցվել «Օպտիկամանրաթելային մալուխի մատակարարում Կովկասի երկաթուղիներին» նախագիծը, իսկ նոյեմբերին՝ «Սահմանների անցման ընթացակարգի ներդաշնակեցում» տեխնիկական աջակցության ծրագիրը:

2003թ. հոկտեմբերի 9-10-ը Երեւանում կայացել է ՏՐԱՍԵԿԱ միջկառավարական հանձնաժողովի երրորդ տարեկան համաժողովը, որտեղ Հայաստանը մեկ տարի ժամկետով ստանձնել է նախագահությունը: Հանձնաժողովի Մշտական քարտուղարության գլխավոր քարտուղար է ընտրվել Բուլղարիան ներկայացնող Լ.Տրենկովան, քանի որ հայկական կողմից առաջարկված թեկնածությունը չի ընդունվել Ադրբեջանի ներկայացուցչի կողմից:

Ներկայումս ընթանում է «Տարանցիկ փոխադրումների համար ընդհանուր իրավական դաշտի ձեւավորում» տեխնիկական աջակցության նախագիծը: Սկսվել է նաեւ «Կովկասյան ավտոմայրուղիների վերականգնում» եւ

«Տրանսպորտի ոլորտի ղեկավար պաշտոնատար անձանց որակավորման բարձրացում» տեխնիկական աջակցության նախագծերի իրականացման գործընթացը:

Հաշվետու ժամանակահատվածում համագործակցության աշխուժացում չեն գրանցել եւ նիստ չեն գումարել հետեւյալ միջկառավարական հանձնաժողովները.

- Հայ-ավստրիական միջկառավարական հանձնաժողով (ՀՀ առելորի եւ տնտեսական զարգացման նախարար Կ.Շշմարիտյան)
- Հայ-ուկրաինական միջկառավարական հանձնաժողով (ՀՀ առելորի եւ տնտեսական զարգացման նախարար Կ.Շշմարիտյան)
- Հայ-ղազախական միջկառավարական հանձնաժողով (ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ Ս.Ավետիսյան)
- Հայ-տաջիկական միջկառավարական հանձնաժողով (ՀՀ բնապահպանության նախարար Վ.Այվազյան)
- Հայ-դրոզական միջկառավարական հանձնաժողով (ՀՀ բնապահպանության նախարար Վ.Այվազյան)
- Հայ-թուրքմենական միջկառավարական հանձնաժողով (ՀՀ էներգետիկայի նախարար Ա.Մովսիսյան)
- Հայ-լիբանանյան միջկառավարական հանձնաժողով (ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետ Դ.Վարդանյան),
- Հայ-մոլդովական միջկառավարական հանձնաժողով (ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Վ.Խաչատրյան)

ՀՀ եւ Տաջիկստանի Հանրապետության միջեւ տնտեսական համագործակցության հանձնաժողով.

2004 թվականի մարտի 16-17-ը Երեւանում կայացավ տնտեսական համագործակցության հայ-տաջիկական միջկառավարական հանձնաժողովի առաջին նիստը:



Միջկառավարական հանձնաժողովի հայկական մասը գլխավորում էր Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարար Վ. Այվազյանը, իսկ տաջիկականը՝ Տաջիկստանի Հանրապետության էկոնոմիկայի եւ առեւտրի նախարարի տեղակալ Ռ. Թուրոնովը: Նիստին մասնակցում էին Հայաստանի եւ Տաջիկստանի միջկառավարական հանձնաժողովի անդամները, ինչպես նաեւ շահագրգիռ նախարարությունների եւ գերատեսչությունների ներկայացուցիչները եւ տնտեսավարող սուբյեկտները: Նիստի ընթացքում քննարկվեցին երկկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր, մասնավորապես՝ երկու երկրների միջեւ համագործակցության իրավապայմանագրային դաշտի ընդլայնումը, արտաքին առեւտրի ծավալների մեծացման եւ առեւտրատնտեսական հարաբերությունների հետագա զարգացման հնարավորությունները:

Տաջիկական կողմը նիստի ժամանակ ներկայացրեց հայ-տաջիկական միջկառավարական հանձնաժողովի կանոնակարգի նախագիծը: Պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ կանոնակարգի նախագծի վերաբերյալ հայկական կողմը երկամսյա ժամկետում իր դիտողություններն ու առաջարկությունները կներկայացնի տաջիկական կողմին, իսկ փաստաթուղթը վերջնական համաձայնեցնելուց հետո կներկայացվի ստորագրմանը հանձնաժողովի երկրորդ նիստի ընթացքում:

Առեւտրատնտեսական հարաբերությունների աշխուժացման եւ երկու երկրների միջեւ ապրանքաշրջանառության ծավալների մեծացման վերաբերյալ կողմերը նշեցին, որ ներկայիս ծավալները չեն համապատասխանում կողմերի առկա հնարավորություններին:

Այդ կապակցությամբ, հանձնաժողովը հանձնարարեց երկու երկրների շահագրգիռ նախարարություններին եւ կազմակերպություններին տնտեսական հարաբերությունների աշխուժացման եւ ապրանքաշրջանառության ծավալների մեծացման նպատակով մշակել անհրաժեշտ միջոցառումներ:

Իրավապայմանագրային դաշտի ընդլայնման նպատակով կողմերը քննարկեցին մի շարք համաձայնագրերի նախագծեր, այդ թվում ագրոարդյունաբերական համալիրի, մշակույթի, կրթության եւ գիտության, տրանսպորտի եւ արդարադատության, ինչպես նաեւ հարկային ոլորտներում համագործակցության մասին: Պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ մինչեւ հանձնաժողովի հաջորդ նիստը կողմերը կավարտեն ներպետական ընթացակարգերը եւ հիշյալ փաստաթղթերը կնախապատրաստեն ստորագրման:

Նիստի ընթացքում ստորագրվեց համաձայնագիր երկու երկրների առեւտրաարդյունաբերական պալատների միջեւ համագործակցության մասին:

Առողջապահության բնագավառում համագործակցությունն ընդլայնելու նպատակով, մասնավորապես Երեւանի «Նորք-Մարաշ» սրտաբանական կենտրոնի հետ, հանձնարարվեց հայկական կողմին երեքամսյա ժամկետում

քննարկել հարցը եւ տաշիկական կողմին ներկայացնել կոնկրետ առաջարկություններ:

Նիստի վերջում կողմերը պայմանավորվեցին հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել Դուշանբեում՝ 2004 թվականի չորրորդ եռամսյակում:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց արտաքին գործերի նախարարությունների միջոցով պարբերաբար տեղեկատվություն փոխանակել հանձնաժողովի շրջանակներում տարվող աշխատանքների մասին:

**Տնտեսական համագործակցության  
Հայ-ամերիկյան միջկառավարական հանձնաժողովի նիստ  
2003թ. նոյեմբերի 4-5, Վաշինգտոն**

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

1. ԱՄՆ կառավարությունն ընդունում է, որ նոր ընդունված Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը (ԱՀՌԾ), հակակոռուպցիոն և տնտեսական զարգացման ծրագրերը փոխկապակցված են, և շնորհավորում է ՀՀ կառավարությանը 2003թ. օգոստոսին ԱՀՌԾ-ի հաստատման կապակցությամբ: ԱՄՆ կառավարությունը կհամագործակցի ՀՀ կառավարության հետ իր մոնիտորինգի պլանի մշակման գործընթացում՝ ապահովելով վերջինիս միջոցով նաև ԱՀՌԾ-ի նպատակներին ուղղված աջակցության գնահատումը:

2. ԱՄՆ կառավարությունը պաշտպանում է ԱՀՌԾ-ի այն հայեցակարգային դրույթները, որոնք վերաբերում են սոցիալական վճարումների հասցեականացմանը, աշխատատեղերի ստեղծմանը և կրթության ու առողջապահության ոլորտներում ներդրումների կատարմանը: Երկու կողմերն էլ ընդունում են, որ հույժ կարևոր է մեծացնել խնայողությունները տնտեսության մեջ և ստեղծել այն հիմնական նախապայմանները, որոնք անհրաժեշտ են ներդրումների ծավալները մեծացնելու համար:

3. ԱՄՆ կառավարությունն ընդունում և ողջունում է վերջին մի քանի տարիների ընթացքում Հայաստանի մակրոտնտեսական առաջընթացը: Այնուհանդերձ, կողմերը համամիտ են, որ ՀՆԱ-ում եկամուտները պետք է ավելի մեծ մասնաբաժին կազմեն և որ հետագա աճի համար կարևոր է ֆինանսական պակասորդի ծածկումը: ՀՀ կառավարությունը մշակում է եկամուտների ավելացման նոր ռազմավարություն, իսկ ԱՄՆ կառավարությունը կուսումնասիրի այն հնարավոր ուղիները, որոնցով հնարավոր կլինի համագործակցել ՀՀ կառավարության և Ազգային ժողովի հետ՝ այդ ռազմավարությանն աջակցելու հարցում:

4. ՀՀ կառավարությունը ԱՄՆ կառավարությանը կտրամադրի «Կայուն տնտեսական զարգացման ռազմավարությունը»՝ այն պատրաստ լինելուն պես: ԱՄՆ կառավարությունը՝ այլ դոնորների հետ միասին, կփորձի աջակցել այդ ռազմավարությամբ սահմանված առաջնայնությունների կենսագործմանն ուղղված ՀՀ կառավարության գործունեությանը:

5. ՀՀ կառավարությունը ԱՄՆ կառավարությանը կտրամադրի «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության» նախագծի վերջին օրինակը՝ այն պատրաստ լինելուն պես, ինչը ակնկալվում է 2003թ. նոյեմբերին: Չնայած 2003թ. նոյեմբերի 6-ին ընդունված վերջնական նախագծի մշակմանը ԱՄՆ կառավարությունը մասնակցություն չի ունեցել, սակայն ԱՄՆ կառավարությունը, այլ դոնորների հետ միասին, կդիտարկի, թե ինչպես կարող է լավագույնս աջակցել «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությամբ» սահմանված նպատակների կենսագործմանը:

6. ԱՄՆ կառավարությունն ընդունում է Հայաստանի ձեռնարկությունների զարգացման ոլորտում նկատված առաջընթացը, մասնավորապես փոքր և միջին ձեռնարկությունների զարգացումը և դրան զուգահեռ 10000 նոր աշխատատեղերի ստեղծումը: Երկու կողմերն էլ համամիտ են, որ փոքր և միջին ձեռնարկությունների հետագա զարգացումը և դրանց գործունեությունը ոչ ստվերային դաշտ տեղափոխելը շատ կարևոր է Հայաստանում աշխատատեղերի ստեղծման և աղքատության մեղմացման համար: ԱՄՆ կառավարությունը՝ ԱՄՆ միջազգային

զարգացման գործակալության և ԱՄՆ գյուղդեպարտամենտի ծրագրերի միջոցով, կշարունակի աջակցություն ցուցաբերել ձեռներեցներին, տրամադրել միկրովարկեր և իրականացնել փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման ծրագրեր և, հաշվի առնելով ՀՀ կառավարության հետաքրքրությունը այս ծրագրերի նկատմամբ, կհամագործակցի Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎՋԵԲ) հետ՝ Հայաստանում փոքր և միջին ձեռնարկությունների զարգացումը խթանելու նպատակով:

7. ԱՄՆ կառավարությունը, խորհրդակցելով ՀՀ կառավարության, սփյուռքահայերի և այլ դոնորների հետ, այդ թվում՝ Համաշխարհային բանկի հետ, կհովանավորի «Գործարար մթնոլորտի գնահատման» նախապատրաստման և իրականացման աշխատանքները, որի միջոցով հնարավոր կլինի գնահատել Հայաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումների ճանապարհին առկա սահմանափակումները: Այս ուղղությամբ կատարվող որևէ հետազոտության արդյունքները պատրաստ լինելուն պես՝ ԱՄՆ կառավարությունը դրանք կտրամադրի ՀՀ կառավարությանը, Բարձրաստիճան գործարար խորհրդին (High Business Council), երկրի գործարարներին և սփյուռքի ներկայացուցիչներին:

8. Կողմերն ընդունում են, որ անհրաժեշտ է մեծացնել տնտեսության ոլորտում կատարվող ֆինանսական միջամտությունների ծավալները: Կողմերը նաև ընդունում են, որ միջամտության մեծացման խոշորագույն խոչընդոտներից մեկը Հայաստանի տնտեսության մեջ «փոխկապակցված վարկավորման» մեծ ծավալներն են: ԱՄՆ կառավարությունն աշխատելու է ՀՀ Կենտրոնական բանկի հետ՝ բանկային համակարգի ամրապնդման ուղիների և երկարաժամկետ վարկավորման հնարավորությունների հայտնաբերման ուղղությամբ, որի նպատակն է մեծացնել փոքր և միջին ձեռնարկություններին տրամադրվող վարկային միջոցների ծավալները՝ միաժամանակ կարգավորելով ռիսկին վերաբերող խնդիրները:

9. ԱՄՆ կառավարությունը քննության է առել ՀՀ կառավարության դիմումն ուղղված ԱՄՆ կառավարությանը՝ ՀՀ PI 480 արտոնյալ պարտքին առնչվող մարումները Հայաստանում ԱՄՆ աջակցության ծրագրերի բյուջեներ փոխանցելու վերաբերյալ: Հաշվի առնելով իրավական դաշտի սահմանափակումները՝ ԱՄՆ կառավարությունը չի կարող այս հարցին դրական պատասխան տալ: Այս հարցի շուրջ հետագա քայլեր չեն նախատեսվում:

10. Երկու կողմերն էլ ընդունում են, որ մեկ շնչին ընկնող եկամուտների չափով Հայաստանը կարող է համապատասխանել «Հազարամյակի օգնության ծրագրի» շրջանակներում ֆինանսավորում ստանալու պայմաններին, երբ ԱՄՆ Կոնգրեսն ընդունի համապատասխան օրենսդրությունը: ԱՄՆ կառավարությունը հայտնում է իր պատրաստակամությունը «Հազարամյակի օգնության ծրագրի» գործընթացը հնարավորինս շուտ սկսելու վերաբերյալ, իսկ ՀՀ կառավարությունն արտահայտում է իր մտադրությունն ամրապնդել իր դիրքերը համապատասխանության չափանիշների մասով և պատրաստվել «Հազարամյակի օգնության ծրագրին» իր հնարավոր մասնակցությանը:

11. ԱՄՆ կառավարությունն ընդունում է Հայաստանի առաջընթացն էներգետիկ ոլորտի մասնավորեցման և վերակազմավորման ասպարեզում և կշարունակի աշխատել ՀՀ կառավարության հետ՝ օգնելով մշակել որոշակի սահմանված նպատակներով էներգետիկ ռազմավարություն, որը կապահովի Հայաստանի բնակչությանը անվտանգ, կայուն և վստահելի էներգամատակարարմամբ: ԱՄՆ կառավարությունը կաշխատի ՀՀ կառավարության հետ՝ նաև ջեռուցման այլընտրանքային միջոցների ստեղծման և էներգետիկ արդյունավետության ապահովման ուղղությամբ: ԱՄՆ էներգետիկայի դեպարտամենտը համաձայնում է աշխատել ՀՀ էներգետիկայի և ՀՀ արտաքին գործերի նախարարությունների հետ՝ էներգետիկ համաժողովի կազմակերպման ուղղությամբ, որի ընթացքում

նախատեսվում է քննարկել էներգետիկ քաղաքականությունը և էներգետիկ ոլորտում կատարվող ներդրումները:

12. ԱՄՆ կառավարությունը համաձայնում է շարունակել տեխնիկական աջակցության տրամադրումը ՀՀ բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովին: ԱՄՆ աջակցությունը հիմնականում ուղղված կլինի վերոնշյալ հանձնաժողովի գործունեության արդյունավետության բարձրացմանը՝ կապված վերջինիս գործառույթների մեջ նաև Կոնունալ ծառայությունների կարգավորման հանձնաժողովի գործառույթներ ներառելու հետ:

13. ԱՄՆ պետքարտուղարությունը ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը, ՀՀ արդարադատության նախարարությանը և արդեն ձևավորված հայկական միջգերատեսչական աշխատանքային խմբին կտրամադրի Հայաստանում դատաքննչական լաբորատորիայի ստեղծման մանրամասն պլանները և առաջադրվող պահանջները: ՀՀ կառավարությունը քայլեր կձեռնարկի ՀՀ կառավարության և ԱՄՆ կառավարության միջև կնքված Նամակ-համաձայնագրի փոփոխված տարբերակի դրույթների շուտափույթ կատարման ուղղությամբ, ինչը թույլ կտա մեծացնել իրավապահ ոլորտում ցուցաբերվող աջակցությունը:

14. Երկու կողմերն էլ ընդունում են, որ փողերի լվացումը, չնայած այսօր այն Հայաստանում դեռևս ակնհայտորեն չի դիտարկվում, կարող է ապագայում հիմնախնդիր դառնալ, մասնավորապես, եթե բանկային գործառնությունների աճն ընթանա համաձայն կանխատեսումների: ԱՄՆ կառավարությունը խրախուսում է, որ ՀՀ կառավարությունն արդեն իսկ այսօր վերոնշյալ խնդրի կարգավորման նպատակով մշակի միջազգայնորեն ընդունելի օրենսդրություն և գործողությունների ծրագրեր, իսկ ԱՄՆ կառավարությունը Գանձապետական դեպարտամենտի միջոցով կտրամադրի տեխնիկական աջակցություն՝ ՀՀ կառավարության կողմից պահանջվող դեպքերում:

15. Հայաստանում ԱՄՆ դեսպանատան և ՀՀ արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչները կհանդիպեն՝ Հայաստանի կողմից ահաբեկչության դեմ պայքարի միջազգային կոնվենցիաների ընդունման կարգավիճակի քննարկման նպատակով: ԱՄՆ կառավարությունը քննության կառնի այս ոլորտում տեխնիկական աջակցության ցուցաբերման հարցը, եթե դա պահանջվի ՀՀ կառավարության կողմից:

16. Երկու կողմերն էլ համամիտ են, որ օրենքի իշխանության և օրինականության երաշխավորման ասպարեզում տեղ գտած թույլ կողմերը հանդիսանում են խոչընդոտներ Հայաստանում տնտեսական աճի, ժողովրդավարական զարգացման և աղքատության հաղթահարման համար: ՀՀ կառավարությունը պարտավորվում է ամրապնդել օրենքի իշխանությունը և օրինականությունը և ողջունում է այս ուղղությամբ ԱՄՆ կառավարության կողմից ցուցաբերվող աջակցությունը: Երկու կողմերը կաշխատեն միասին՝ նշված խնդիրների կարգավորման և բարելավման ուղղությամբ:

17. ԱՄՆ կառավարությունն ընդունում է մարդկանց անօրինական փոխադրումների (թրաֆիքինգի) դեմ պայքարի ոլորտում ՀՀ կառավարության ունեցած առաջընթացը, որի ապացույցն է ԱՄՆ պետքարտուղարության կողմից պատրաստվող «Թրաֆիքինգի վերաբերյալ» վերջին զեկույցում երկրների դասակարգման սանդղակում Հայաստանի դիրքի բարելավումը: ՀՀ կառավարությունը և ԱՄՆ պետքարտուղարությունը շարունակելու են համագործակցությունը թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագրի մշակման և իրականացման ուղղությամբ:

18. Նախքան Հայ-ամերիկյան միջկառավարական հանձնաժողովի հաջորդ հանդիպումը ՀՀ կառավարությունը ուղիներ կգտնի ԱՀԴԾ-ի միջոցով միջազգային աջակցության համակարգման համար, որը կնպաստի պետական զարգացմանը,

տնտեսական բարեփոխումների և համագործակցության զարգացմանը: Հաշվի առնելով, որ ներկայումս ԱՀՌԾ-ն ՀՀ կառավարության համար առաջնայնություն է՝ համակարգման այս աշխատանքները կներդաշնակեցնեն ԱՀՌԾ-ն, պետության հակակոռուպցիոն, ինչպես նաև տնտեսական զարգացման առաջարկվող այլ ռազմավարությունները:

19. Երկու կողմերն էլ համակարծիք են այն հարցում, որ Հայաստանի նկատմամբ հնարավորինս շուտ պետք է վերացվեն Ջեքսոն-Վենիկի սահմանափակումները՝ արտահայտելով կրոնական ազատության և առևտրային հարցերում Հայաստանում նկատված առաջընթացը: ԱՄՆ պետքարտուղարությունը ՀՀ կառավարությանը կտրամադրի փաստաթուղթ, որում ներկայացվում է ԱՄՆ վարչակազմի դիրքորոշումը Հայաստանի նկատմամբ Ջեքսոն-Վենիկի սահմանափակումների փոփոխված դրույթները հանելու վերաբերյալ: Դեսպան Օրդուեյը Երևանում կանցկացնի մամուլի ասուլիս, որտեղ կբացատրի Ջեքսոն-Վենիկի սահմանափակումների էությունը և կանդրադառնա ԱՄՆ-ի ու Հայաստանի միջև առկա առևտրային հարաբերությունների ներկա վիճակին:

20. ՀՀ կառավարությունը Հայաստանում ԱՄՆ դեսպանատանը կտրամադրի համառոտ տեղեկանք Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) պահանջների բավարարման վերաբերյալ: Փաստաթուղթը ստանալուց հետո ԱՄՆ կառավարությունը, այլ դոնորների հետ համատեղ, քննության կառնի այդ հարցում աջակցության որոշակի հնարավորությունները: Երկու կողմերն էլ ընդունում են, որ մտավոր սեփականության իրավունքի կիրարկումը կարևոր է: ԱՄՆ կառավարությունը պարտավորվում է մտավոր սեփականության իրավունքին վերաբերող հարցերի շուրջ ցուցաբերել տեխնիկական աջակցություն, իսկ մյուս ոլորտներում հնարավոր տեխնիկական աջակցությունը քննության կառնվի ՀՀ կառավարության հետ:

21. ՀՀ կառավարությունը համաձայնում է, որ որևէ տեսակի նվազագույն կողմնորոշիչ գնային սանդղակի կիրառումը ԱՀԿ-ի առջև ստանձնած պարտավորությունների խախտում է: ՀՀ կառավարությունն ԱՄՆ դեսպանատանը տրամադրելու է գրավոր հայտարարագիր, որն անվերապահորեն հաստատում է, որ Հայաստանում չի գործում որևէ համակարգչավորված նվազագույն կողմնորոշիչ գնային համակարգ: ԱՄՆ կառավարությունը համաձայնում է քննության առնել ՀՀ շահագրգիռ գերատեսչություններին տեխնիկական կամ այլ տեսակի աջակցության տրամադրման հնարավորությունը՝ ապրանքների ներմուծման գնահատման հարցում օգնելու նպատակով:

22. Երկու կողմերն էլ ընդունում են, որ 1992թ. կնքված Երկկողմ համաձայնագրի համաձայն տեխնիկական աջակցության կամ մարդասիրական օգնության շրջանակներում ապրանքների ներմուծման ընթացքում խնդիրներ են եղել: Երկու կողմերն էլ համաձայնում են, որ երբ ԱՄՆ կառավարությունը և այլ մարմիններ ներկրում են ապրանքներ այդ Երկկողմ համաձայնագրի շրջանակներում, ապա գործընթացն ավելի արդյունավետ դարձնելու համար պետք է պահպանվի հետևյալ ընթացակարգը.

- Վեց ամիսը մեկ անգամ Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը ՀՀ կառավարությանն առընթեր (ԿԱ) մաքսային պետական կոմիտեին, ՀՀ արտաքին գործերի նախարարությանը և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը կներկայացնի Երկկողմ համաձայնագրի շրջանակներում գործող կազմակերպությունների թարմացված ցուցակը :
- Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը կնշանակի որևէ մեկին, որը կկատարի բոլոր անհրաժեշտ քայլերը՝ ՀՀ արտաքին գործերի նախարարությունում վարվող վերը նշված տվյալների շտեմարանի ճշգրտությունը և

Ուսումնականությանը ներկայացվող ցուցակներն ստուգելու համար՝ հանդիմանալով որ նշված համակարգն արդյունավետ է գործում:

- ԱՄՆ կառավարությունը համաձայնում է, որ որպես կանոն Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը կամ ԱՄՆ որևէ պետական գերատեսչություն Երկկողմ համաձայնագրի շրջանակներում առաքվող ապրանքների ժամանումից մեկ ամիս առաջ նամակ է ուղարկելու ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտե (պատճենը՝ ՀՀ արտաքին գործերի նախարարությանը)՝ նշելով առաքման մասին մանրամասներ (բեռի ժամանման ամսաթիվը՝ որոշակի կամ էլ մոտավոր, ապրանքների ընդհանուր նկարագիրը): ԱՄՆ կառավարությունը կփորձի ապահովել այս նամակների ուղարկումը բեռի ժամանումից մեկ ամիս առաջ, իսկ ՀՀ կառավարությունը կհամագործակցի բեռները մաքսային վճարումներից ազատման հարցում, եթե ստացվող բեռների մասին ծանուցումը ուղարկվում է մինչև մեկ ամսից պակաս ժամանակահատվածը:
- Եթե ՀՀ կառավարության պաշտոնյաները կասկածներ ունենան Երկկողմ համաձայնագրի շրջանակներում Հայաստան ներկրվող բեռների վերաբերյալ, ապա պետք է անմիջապես տեղյակ պահեն ԱՄՆ դեսպանատանը՝ այն ընթացակարգերով, որոնք վերջինս կտրամադրի ՀՀ արտաքին գործերի նախարարությանը:

23. ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարը համաձայնում է կարգավորել այս պահին առկա հետևյալ մաքսային վեճերը.

- ԱՄՆ աջակցությամբ իրականացվող էներգիայի արդյունավետ օգտագործման ծրագրի շրջանակներում AEAI ընկերությունը փորձել է Հայաստան ներկրել փայտի չորացուցիչներ: Երկու կողմերն էլ համամիտ են, որ այս բեռնափոխադրումը համապատասխանում է Երկկողմ համաձայնագրի պայմաններին: ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը համաձայնում է այս ծրագրի նկարագիրը մինչև 2003թ. նոյեմբերի 7-ը ներկայացնել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն: Վերջինս համաձայնում է կարգավորել այս խնդիրը մինչև նոյեմբերի 14-ը՝ տրամադրելով մի նամակ, որը թույլ կտա այս չորացուցիչները ներկրել Հայաստան՝ համաձայն Երկկողմ համաձայնագրի դրույթների (այսինքն՝ առանց հարկային, մաքսային և այլ վճարումներ կատարելու): ՀՀ ԿԱ մաքսային պետական կոմիտեի նախագահն ընդունում է, որ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի այս նամակը կունենա գերակա նշանակություն՝ նշված չորացուցիչների ներկրման վերաբերյալ Մաքսային կոմիտեի որևէ այլ դիրքորոշման նկատմամբ: /Ծանոթություն: Այս հարցը կարգավորվել է 2003թ. նոյեմբերի կեսերին, և փայտի չորացուցիչները հանձնվել են ԱՄՆ կառավարության աջակցության ծրագիր իրականացնող կազմակերպությանը:/
- Քաունթերֆարթ Ինթերնեշնլը հիգիենիկ փաթեթներ է ներկրել Հայաստան, և այդ ապրանքների հարկման հետ կապված խնդիրներ են առաջացել մաքսային պաշտոնյաների հետ: ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը համաձայնում է քննարկել այս հարցը Գլխավոր դատախազության հետ, քանի որ մաքսային մարմինները գործը հանձնել են դատախազությանը: ԱՄՆ դեսպանատունը կնշանակի որևէ մեկին, որը կպատասխանի ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունում այս թեմայի շուրջ առաջացած հարցերին: /Ծանոթություն: Այս հարցը կարգավորվել է 2003թ. դեկտեմբերի կեսերին, և հիգիենիկ փաթեթները հանձնվել են ԱՄՆ կառավարության աջակցության ծրագիր իրականացնող կազմակերպությանը:/

24. Երկու կողմերն էլ համաձայնում են, որ նախքան Տնտեսական համագործակցության հայ-ամերիկյան միջկառավարական հանձնաժողովի հաջորդ նիստը պետք է ձևավորվեն երկու ենթահանձնաժողովներ՝ Գիտության հարցերով ենթահանձնաժողովը և Առևտրի ու ներդրումների հարցերով ենթահանձնաժողովը:

ՀՀ կառավարությունը և ԱՄՆ կառավարությունը կնշանակեն պատասխանատուներ, որոնք առաջընթացի վերաբերյալ ուղղակիորեն հաշվետու կլինեն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարին և ԱՄՆ դեսպանատանը: Այս երկու ենթահանձնաժողովները պետք է պատրաստ լինեն իրենց անդրանիկ նիստերը գումարել Հայ-ամերիկյան միջկառավարական հանձնաժողովի հաջորդ նիստի ժամանակ, կամ էլ մինչ այդ:

25. Երկու կողմերն էլ համաձայնում են, որ 2004 ֆինանսական տարվա ընթացքում Հայաստանում չեն իրականացվելու ԱՄՆ կառավարության դրամայնացման նպատակային ծրագրեր: Նախքան 2005 ֆինանսական տարվա համար նպատակային ծրագրերի առաջարկների ներկայացման ժամկետի ավարտը, ԱՄՆ-ը հնարավոր բոլոր առաջարկները կքննարկի նպատակային ծրագրերի կողմնակիցների հետ՝ անհրաժեշտության դեպքում խորհրդակցելով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կամ այլ շահագրգիռ գերատեսչությունների հետ: Եթե Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը հավանություն տա այդ առաջարկներին, ապա կքննարկի դրանք ՀՀ վարչապետի աշխատակազմի հետ: Եթե ՀՀ վարչապետը 2005 ֆինանսական տարվա սկզբից առնվազն վեց ամիս առաջ (մինչև 2004թ. ապրիլի 1-ը) Հայաստանում ԱՄՆ դեսպանատանը ներկայացնի գրավոր հաստատում առ այն, որ ՀՀ կառավարությունը կաջակցի այդ ծրագրերին ըստ Երկկողմ համաձայնագրի, այսինքն՝ ներկրվող ապրանքներն ազատված կլինեն մաքսատուրքերից, ավելացված արժեքի հարկից, պահեստավորման չիմնավորված վարձավճարներից և ներկրման հետ կապված այլ վճարումներից, ապա այդ դեպքում Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը կտեղեկացնի ԱՄՆ կառավարության համապատասխան կառույցներին այդ առաջարկներին իր համաձայնության մասին: Երկու կողմերն էլ հասկանում են, որ Հայաստանում ԱՄՆ դեսպանատան հավանությանն արժանանալու փաստը դեռևս չի նշանակում, որ ծրագիրն ԱՄՆ կառավարության դրամայնացման ծրագիր նախատեսող համապատասխան գերատեսչության կողմից միանշանակ կրնոմվի:

26. ՀՀ կառավարությունը տեղյակ է, որ եթե ԱՄՆ աջակցության միջոցներից ՀՀ կառավարության կողմից հարկային պահումներ են կատարվում, ապա դրանց չափով նվազեցվում են ԱՄՆ աջակցության ընդհանուր ծավալները: Կողմերը համաձայնում են համատեղ աշխատել, որպեսզի խուսափեն ԱՄՆ աջակցության միջոցների հարկումից, իսկ հարկման հնարավոր դեպքերում դրանք քննության առնել՝ խնդիրն հնարավորինս արագ լուծելու նպատակով:

Սույն Գործողությունների ծրագիրն ուժի մեջ է մտնում երկու կողմերի ստորագրության պահից:

ԱՄՆ կառավարության կողմից

ՀՀ կառավարության կողմից

Ջոն Օրդուեյ  
Հայաստանում ԱՄՆ դեսպան

Վարդան Խաչատրյան  
ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի  
նախարար